

ՆՆԵՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի
իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ

**XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**

Հոդվածը նվիրված է 19-րդ դարի առաջավոր մտածողներ Մ. Աղաչրաղյանի, Գ. Փեշտիմալճյանի, Գ. Սվաճյանի, Ա. Գարագաշյանի, Ն. Ռուսինյանի, Հ. Չամուռճյանի, Մ. Մամուրյանի, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ս. Նազարյանի, Մ. Թադևոսյանի, Ռ. Պերպերյանի, Գ. Արծրունու բնաիրավական հայացքների ուսումնասիրմանը: Հեղինակը իրականացված ուսումնասիրման արդյունքում հանգել է այն եզրահանգման, որ 19-րդ դարի հայ մտածողները, ժառանգելով վերածննդի դարաշրջանի եվրոպական մտածողների գաղափարները բնական իրավունքի, հասարակական դաշինքի մասին, չժխտելով Աստծո գոյությունը, մարդու բնական իրավունքները կապել են ոչ թե Աստծո կամքի, այլ մարդու բնական բնության հետ: Կոչ անելով ազատագրական պայքարի՝ քարոզվում էին բնական իրավունքի հիմքը հանդիսացող այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են՝ հավասարություն, եղբարություն, ազատություն: Ուսումնասիրվող մտածողների ազատասիրական, լուսավորական գաղափարները հանդիսացան հայ ժողովրդի ազգային – ազատագրական պայքարի հիմնական նախադրյալներից:

Հիմնարար քառեր՝ բնական իրավունք, ազատություն, հավասարություն, եղբայրություն, դրական իրավունք, լուսավորություն:

« Իրաւանց և պարտուց
հաւասարակշռութիւնը օրէններու
օրէնն է, որ *արդարութիւն* կը կոչուի:»¹:

Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն այն ժողովուրդներից է, որ բնական իրավունքի մասին պատկերացումներ ունեցել են դեռևս մ.թ. շատ առաջ:

«Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ու այլ առասպելների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայերի նախնիները նախասկզբնական բնագոյներով՝ ապրիորի կերպով, հասկացել են կյանքի, ազատության, արժանապատվության, արդարության, եղբայրության և մարդկության բնական այլ արժեքների էությունը:

Բնական իրավունքի գաղափարների հիմք են հանդիսացել քրիստոնեության գաղափարախոսության հիմնական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ եղբայրությունը, հավասարությունը, սերը, ազատությունը, փոխադարձ օգնությունը և այլն, որոնք բնական իրավունքի տեսության շրջանակներում ձեռք են բերել իրավական նորմի հատկանիշներ:

Ավելին, բնական իրավունքի գաղափարը արտացոլված է Աստծո տասը պատվիրանների մեջ, որոնք բիբլիական օրենսդրության հիմքն են կազմում և հաստատում են այն ճշմարտությունը, որ Աստծո հռչակած իրավունքները համընդհանուր են և հավասարաչափ, վերաբերում են բոլոր մարդկանց, քանզի մատնանշում են ոչ թե այն անձի

իրավունքները, ում հասցեագրված են, այլ նրա շուրջ գտնվող բոլոր մարդկանց նույնանման իրավունքները: Այսպես. «Մի՛ սպանիր» պատվիրանը ենթադրում է ոչ թե՝ «դու ապրելու իրավունք ունես», այլ՝ «բոլոր մյուսներն ունեն ապրելու իրավունքը», «Մի՛ շնացիր» պատվիրանը նշանակում է, որ այլ անձինք նույնպես ունեն ընտանիքի անձեռնմխելիության իրավունք, «Մի՛ գողացիր»՝ ենթադրում է ուրիշների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջը: Պատվիրանների ընդհանուր գաղափարախոսությունը սահմանում է Կանտը. «Վարվիր այնպես, որ քո կամքի ազատ դրսևորումը համատեղելի լինի յուրանչյուրի ազատության հետ՝ համընդհանուր օրենքի համաձայն»²: «Ուրեմն, պատվիրանների բոլոր արգելքները ներկայանում են իբրև բնական իրավունքի համընդհանրության երաշխիք, իսկ հասարակության այն կազմավորումը, որ տեսնում ենք աստվածաշնչյան իրադարձությունների ընթացքում, ներկայանում է որպես ի սկզբանե մարդուն տրված իրավունքների գործունեությունն ապահովելու համար նախատեսված իրական մեխանիզմ»³:

Հայ իրականության մեջ բնական իրավունքի տեսության առաջադիմական գաղափարները սոցիալական ամենաբարձր հնչեղությունն են ստացել 17-18-րդ դարերում, երբ եվրոպական առաջադեմ մտածողները, մասնավորապես Հրոցեոսը, Սպինոզան, Հոբսը, Ռուսոն ֆեոդալական հասարակարգի դեմ պայքարելու համար ճանապարհ հարթեցին բնական իրավունքի տեսության առա-

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ջադիմական գաղափարների տարածման համար:

17-18-րդ դարերի ընթացքում բնական իրավունքի տեսության մասին ձևավորված գաղափարների հենքի վրա ձևավորվեցին 19-րդ դարի հայ մտածողների գաղափարները: Մասնավորապես, ժառանգվեցին այն ազատական սկզբունքները, որոնք ուղղված էին ֆեոդալական հասարակարգի դեմ և նպատակ ունեին վերականգնելու մարդկանց ի ծնե տրված բնական իրավունքները:

Անդրադառնանք 19-րդ դարի սկանավոր հայ մտածողների գաղափարներին, որոնք իրենց լուսավորչական հայացքներով մեծ ներդրում են կատարել հայ իրավաբանական մտքի պատմության մեջ:

Մեսրոպ Աղաչրադյանը⁴ «Մխիթարյան միաբանության» ճանաչված անդամներից մեկը, իր «Բնական օրենք կամ կրթութիւն բարի եւ պարկեշտ քաղաքացի ըլլալու համար» ծավալուն աշխատության մեջ, չժխտելով Աստծո գոյությունը, դեիզմի դիրքերից պաշտպանել է բնական իրավունքի տեսությունը՝ վկայելով, որ մարդիկ բնությունից ծնվում են ազատ և հավասար բնական իրավունքներով, որոնք էլ պետք է հանդիսանան պետության կողմից սահմանված գրավոր օրենքների հիմքը:

Բնագետի կարծիքով մարդիկ ստեղծված են հավասար և նման են մեկը մեկին, հետևաբար՝ ազատ մեկը մյուսից:

Աղաչրադյանը նախ տվել է ընդհանրապես օրենքի իրավական բացատրությունը. «...օրենքը ... օգտակար վախճանի համար դրրված կարգ ու կանոն մեկեմը՝ որ ունի հեղինակութի կամ իշխանութիւն ուրիշներուն վրայ»: Ըստ վարդապետի՝ օրենքները հանդես են գալիս երկու տեսքով՝ Աստվածային և մարդկային, ընդ որում Աստվածայինն իր հերթին հանդես է գալիս բնական օրենքների և գերբնական օրենքների տեսքով, իսկ մարդկային օրենքները բաժանվում են ըստ ազգերի, քանի որ յուրաքանչյուր ազգ, ելնելով իր շահերից և պայմաններից, ընդունում է օրենքներ, որոնք կարող են չնմանվել այլ պետությունների օրենսդրությանը:

Անդրադառնալով բնական իրավունքին՝ հեղինակը գրել է. «Բնական օրենքն է՝ կանոնատու և հաստատուն գործոց կարգը, որով ... կրկառավարէ զբոլոր աշխարհքը. կամ է այն կարգը, որ ... իմաստութիւնը դրեր է մարդուն զգայութեանը և բանականութեանը առաջին, որպէս զի անոնց գործքերը հասարակ ու հաւասար կանոնով մը վարվի, և ան կանոնովը կառաջնորդէ մարդկանց դէպ ի կատարելութի և երջանկութի, խըտրութի չընելով ոչ քաղքի և ոչ սեռի, այսինքն թէ էրիկ մարդ ըլլայ, և թէ կնիկ մարդ, և թէ որ և իցէ քաղքէ ըլլայ»:

Տարանջատելով բնական և դրական իրավունքը և խոսելով դրական իրավունքի մասին՝ հեղինակը հայտնել է այն կարծիքը, որ դրական իրա-

վունքի ակտերը խելացի մարդկանց կողմից հասարակության մեջ կարգ ու կանոն ստեղծելու համար կազմված հրամաններ են: Օրենքը մարդկանց վնասակար արարքները պատժի միջոցով արգելող միջոց է: Այդ պատճառով էլ, որպեսզի հասարակության մեջ մարդիկ ապրեն և աշխատեն առանց սահմանված կարգի խախտումների, առանց պատժվելու և վնասի հատուցում տալու, անհրաժեշտ է գիտենալ ու պատկերացումներ ունենալ օրենքների պահանջների մասին, այսինքն՝ ունենան իրավագիտակցություն: Հեղինակը, անդրադառնալով օրենքների դերին, նշել է, որ, եթե մարդիկ չպահեին այդ օրենքները, չհնազանդվեին դրանց, ապա հասարակության մեջ կլցվեր ամեն տեսակ անկարգություն. մանավանդ՝ առևտրական քաղաքներում, որովհետև առևտրականները կուզեին ավելի հարստանալ մարդկանց խաբելու միջոցով՝ կարծելով, որ այդ հարստության միջոցով կարող են գնել երջանկություն: Սակայն, բնությունը պահանջում է լինել բարոյական, ինչը լավ չեն հասկանում ոմանք: «Առաքինի եղիր, ով մարդ, թէ հարուստ ես, և թէ աղքատ, որ երջանիկ ըլլաս թէ ողջութեան ատենը, և թէ մեռնելու»: «Բայց առաքինի ըլլալու համար պետք է, որ մարդը լուսատուրի ... որ գայ ճանչնայ զպայծառ օրենքը բնական»: Եթե չսովորի և չհասկանա բնության պահանջները, ապա չի կարող հասկանալ, որ. «...ամեն մարդիկ հաւասար ստեղծած և նրման են մեկզմէկու, հետևաբար ավանկախ ազատ են մեկզմէկէ...»:

Հայ մտածողը պնդել է, որ նշված երևույթները հայերի զգալի մասը չի հասկացել այն պատճառով, որ լուսավորված չի եղել, կրթության չի ձգտել:

Աղաչրադյանը, համամիտ լինելով բնական իրավունքի տեսության առանձին տեսաբանների հետ, սահմանել է բնական իրավունքի մի շարք հատկանիշների բովանդակությունը, այսպես, օրինակ. 1) բնական իրավունքը հավասարապես պատկանում է աշխարհի բոլոր մարդկանց՝ անկախ նրանց ազգային պատկանելիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, ունեցվածքից, 2) այն փոփոխության չի ենթարկվում ժամանակի ազդեցության հետևանքով, 3) գրի չի առնվել և ապրել է դարերդար մարդկանց մեջ բանավոր ձևով, 4) ունի մարդասիրական, խաղաղ և արդար բնույթ, 5) ունի առաջնություն մարդկային կամ արհեստական օրենքների նկատմամբ, 6) բնական օրենքն է գործում, եթե մարդկային օրենքը չի համապատասխանում առաջինին:

Աղաչրադյանը հայտնել է այն կարծիքը, որ, եթե նույնիսկ հասարակության մեջ չընդունվեն օրենքներ, ապա բնական իրավունքի պահանջները կատարելու դեպքում հասարակությունը չի կարող վնասվել: «...բնական օրենքն, միայնակ ինքն բաւական ըլլալն է, այնպէս, որ եթէ ուրիշ ամեն

www.lawinstitute.am

օրենքները մեկ տեղե մը պակաս ըլլայ, բնական օրենքը բաւական է պարտաւորել զմարդիկ բարեպէս ապրելու, և չար բան մը չընելու»¹⁰,- գրել է հայ մտածողը:

Ինչպէս տեսնում ենք, 19-րդ դարի 1-ին կեսին մի շարք հայ հեղինակներ զարգացրել են առաջադիմական այնպիսի գաղափարներ, ըստ որոնց՝ հասարակական կյանքի փոփոխությունը ոչ թե կախված է Աստծու կամքից, այլ պայմանավորված է լուսավորության զարգացման հետ: Նրանք հաստատում էին, որ գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգը չի համապատասխանում մարդու էությանը, հետևաբար այն պետք է փոխարինվի բնական հասարակարգով: Այս տեսակետից բնորոշ են **Գրիգոր Փեշտիմալճյանի**¹¹ աշխատություններում շարադրված հայացքները, որոնցում հայ մտածողը նույնպես պաշտպանել է բնական իրավունքի առկայությունը առանց միջնադարյան կրոնական դոգմաների:

Շեղինակի կարծիքով, մարդիկ ի ծնե ազատ են և հավասար իրենց բնական այլ իրավունքներով, որոնց համաձայն, երբ թուրք փաշաները և քուրդ բեկերը կամայականություն են ցուցաբերում հայ աշխատավորության նկատմամբ՝ նրանց՝ քրիստոնեություն դավանելու պատճառով, ապա հայերը, ունենալով կյանքի և արժանապատվության պաշտպանության իրավունք, կարող են և պետք է պայքարեն իրենց համար: Գ.ր. Փեշտիմալճյանը, տարանջատելով բնական և դրական իրավունքը, վերջինս բխեցնում է բնական իրավունքից, այդ պատճառով էլ դատապարտում է օրենսդիրների շեղումները բնական իրավունքից՝ այն անվանելով կամայականություն և գոյություն ունեցող օրինաչափությունների ոտնահարում, ընդգծելով, որ. «Քաղաքական իրաւունքն է նոյն իսկ բնական իրաւունքն պատշաճեալ օգտի իւրաքանչիւր ընկերութեան»¹²: Նրա կարծիքով, օրենսդիրները պետք է խնամքով քննարկեն օրենքների նախագծերը նաև պարզելու համար, թե այն համապատասխանում է արդյոք բնական իրավունքի պահանջներին, թե ոչ: Օրենսդիրները պարտավոր են «...դատաստան առնել, խնամով քննեսցէ զօրէնսն, թէ արդեօք համեմատ իցէ բնականին, թէ հակառակ, օգտակար իւրաքանչիւր ընկերութեան՝ թէ անօգուտ կամ վնասակար, և ըստ այնմ դատեսցի... Չի և նմա հարկ է անխտոր զհետ երթալ բնականին՝ առ՛ի լինել արդար, և յօգուտ հասարակաց ...»¹³:

Հարություն Սվաճյանը¹⁴ «Արևելյան մամուլ» ամսագրում հրապարակած հոդվածներում, մասնավորապես՝ «Իրավագիտություն և իրավունք» հոդվածում նույնպես անդրադարձել է բնական իրավունքի տեսության հարցերին՝ ելնելով բնությունից բոլորի ազատության սկզբունքից: Ըստ նրա՝ «Բնական Իրաւունքը այն նախնական կանո-

նաց ամբողջութիւնն է, որք, հաւասարապէս բոլոր մարդերէ զգացուած և ճանչուած ըլլալով, ամեն ատեն և ամեն տեղ Երկնային օրէնադրին կամ Բնութեան ձեռքով մեր հոգւոյն վրայ տպուած կը նկատուին»¹⁵:

Արևմտահայ իրավաբանը իրավունքը տեսնում էր երկու մասով՝ բնական և դրական՝ բնականի գերակայությամբ: Ըստ Հ. Սվաճյանի՝ դրական իրավունքը, ելնելով բնական իրավունքից, ոչ միայն սահմանում է մարդկանց վարքագծի կանոնները, այլև ստեղծում է պայմաններ, որպեսզի նրա անդամները ծանոթանան բնական իրավունքին, քանի որ բնականը գործում է բանավոր:

Սվաճյանը ընդգծել է, որ, ճիշտ է, մարդը ազատ է իր նյութական և մտավոր կարողությունները զարգացնելու գործում, սակայն յուրաքանչյուր մարդ պետք է իմանա, որ իր նմաններն էլ ունեն նույն իրավունքները, և նա ունի պարտականություն՝ հարգելու այդ իրավունքները: Եվ այստեղ պարտականությունը փոխկապակցվում է իրավունքի հետ և գրեթե դառնում է դրա սահմանը : «Վայելէ ազատութիւնդ, ահա իրաւունք.յարգէ ուրիշի ազատութիւնը, ահա պարտիք»¹⁶:

Հայ մտածողը այն կարծիքն է արտահայտել, որ բնական իրավունքը հիմնված է արդարության, բարոյականության վրա, որտեղ գործում է «սիրիք ընկերոջդ քո անձի պես և մի արա ուրիշի նկատմամբ այն, ինչ չես ուզի, որ քեզ անեն» սկզբունքը:

Խոսելով բնական և դրական իրավունքների տարբերության մասին՝ Սվաճյանը նշել է, որ բնական իրավունքը միատեսակ է, անփոփոխ ամբողջ մարդկության համար առանց որևէ ճնշման, իսկ դրականը յուրաքանչյուր պետության մոտ կարող է տարբեր լինել, կարող է փոփոխվել՝ կախված տվյալ պետության կարիքներից, ու վերաբերում է միայն տվյալ պետությանը:

Այս տեսակետից էլ հետաքրքրություն են ներկայացնում «Արևելյան մամուլ» ամսագրում տպագրած նրա մի շարք հոդվածները, որոնցում ասվում է, որ բնական իրավունքը նաև բարու և չարի մասին է: Հոդվածագիրը գտնում է, որ մարդկանց պարտականությունները ուղղված են բարին կատարելուն, իսկ իրավունքը կոչված է վերացնելու այն բոլոր արգելքները, որոնք խանգարում են մարդկանց պարտականությունները կատարելու գործում:

Հայ մտածողները, այդ թվում՝ Սվաճյանը, հասկացել են, որ իրավունքը և բարոյականությունը, սերտորեն կապված լինելով միմյանց հետ, այնուամենայնիվ, տարբերվում են նախ այն պատճառով, որ իրավունքը սահմանվում է պետության կողմից, իսկ բարոյականությունը ձևավորվում է մարդկային կյանքի ընթացքում՝ նրանց՝ չարի և բարու, վատի և լավի, արդարի և անարդարի, պատ-

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վի, խղճի, ազնիվի և անազնիվի մասին պատկերացումների հիման վրա:

Հայ իրականության մեջ «Բանականության քաղաքացիություն» է հռչակել նաև **Անտոն Գարագաշյանը**¹⁷, որը պահանջել է ամեն ինչ դնել բանականության դատաստանին: Հավատի պաշտամունքին հաջորդելու ելած բանականությունը Գարագաշյանը ներկայացրել է որպես բնական օրենք: Մտածողը իր «Նկարագիր ուսմանց որ է բնութիւն, պատմութիւն, հարկ եւ օգուտ իւրաքանչիւր մասանց գրագիտութեան» գրաբար գրած աշխատությունում քննարկելով իրավագիտության խնդիրները՝ ընդգծել է, որ գործող իրավունքը ձևավորվել է բնական իրավունքից: Հեղինակը, խոսելով մարդկային հասարակարգի մասին, գրել է, որ, երբ մարդիկ կազմեցին առաջին ընկերական կյանքը, չունեին օրենք ու իրավունք և դեկլարվում էին բնական իրավունքով: Եվ ահա, մարդկային հասարակության զարգացման որոշ փուլում առաջացած բախումները, շահերի հակադրությունները կարգավորելու համար պահանջվեցին վարքագծի նոր կանոններ, որոնք կոչվեցին օրենքներ: Մարդկանց միջև ստեղծված հասարակական հարաբերությունները կարգավորելու համար բնական իրավունքի հիման վրա ընդունվեցին օրենքներ, որոնց հիման վրա առաջացած իրավունքը կոչվեց դրական իրավունք կամ մարդկային իրավունք: Խոսելով այս հարցի մասին՝ նա հետաքրքիր հայացքներ է առաջ քաշում բնական և դրական իրավունքի վերաբերյալ՝ ասելով, որ բնական իրավունքը կամ օրենքները պարտադիր են հասարակության բոլոր անդամների համար, իսկ դրականը պարտադիր է հասարակության այն անդամի համար, որը իրավախախտում է կատարում: Գարագաշյանը մարդկանց խորհուրդ է տալիս ծանոթանալ գործող օրենսդրության հետ, պատկերացումներ ունենալ նրա պահանջների վերաբերյալ, իսկ դրա համար նրանք պետք է հենվեն կրոնի վրա: «Վասն այնորիկ իրաւագիտութիւնն ի հարկէ իսկ բովանդակէ զտեղեկութիւն ամենայնի որ ի կրօնսն հայի, քանզի առաջին պարտք արդարութեան այն է, լինեն նեցուկ եւ հաստատութիւն կրօնից, եւ համարձակ առնել զպաշտօն նորա...»¹⁸: Խոսելով դրական իրավունքով մարդկանց վարքագիծը կարգավորելու մասին՝ հեղինակը նշել է, որ իրավախախտմամբ անհատը դուրս է գալիս իր սահմաններից և մտնում է ուրիշի իրավունքների սահմանը. այստեղից առաջանում է իրավունքի խախտում, որի պատճառով էլ հարկ է լինում կիրառել ոչ թե բնական իրավունքը, այլ դրական իրավունքը:

Բուրժուական սահմանադրական ակտերի ոգով կազմված 1860թ. Ազգային սահմանդրության հեղինակ, Փարիզում կրթված և հեղափոխական մկրտություն ստացած **Նահապետ Ռուսինյանը**¹⁹

իր ստեղծագործություններում քաղաքացիական հասարակության մասին խոսելիս նույնպես ելել է բնությունից բոլոր մարդկանց ի ծնե հավասար լինելու սկզբունքից:

Բոլոր մարդիկ, անկախ ազգությունից, կրոնից, ունեցվածքից, բնությունից հավասար լինելով, հասարակություն մեջ նույնպես պետք է հավասար լինեն, շեշտել է Ռուսինյանը: «...իրաւունքներ ունիմ, բայց միայն ե՞ս ունիմ: Երբ ես ինձ մտիկ կ'ընեմ... կը տեսնեմ, կ'զգամ, որ բնութիւնը տուած չէ ինձ իրաւունք մը զոր տուած չըլլայ ուրիշ մարդոց ալ, որք ինձի պէս մարդկութեան բաղկացուցիչ մասերն են, և անոնք ալ ճիշդ ինձի պէս և ինձի չափ իրաւունքներ ունիմ: Բնական իրաւունք մ'ունիմ ազատ ըլլալու, այսինքն ազատապէս զարգանալու երկնից ներքև, ուրեմն ամեն մարդիկ ալ հաւասարապէս ինձի չափ և ինձի պէս սոյն մի և նոյն իրաւունք ունիմ: Արդ, այդ ամեն ազատ գործունէութիւններն իրարու հետ յարաբերութեան մէջ են, ամենն ալ նոյնական իրաւունքներ ունիմ, որք իրենց անձնականութեան պայմաններն են, և կը ձգտին գործածել իրենց իրաւունքներն գործողութեան կարելի եղածին չափ ընդարձակ շրջանակի մը մէջ»²⁰: Բնական իրավունքների օգտագործման ընթացքում, անխուսափելի են բախումները, որոնք պետք է կանոնակարգվեն. «Բնական օրենք պիտի ըլլայ այդ կանոնաւորիչը ...»²¹:

Ռուսինյանի հավաստիացմամբ իրավունքի գաղափարը անբաժանելի է պարտքի գաղափարից, մարդկանց կողմից միմյանց իրավունքների ճանաչումը միաժամանակ այլ բան չի նշանակում, եթե ոչ իրար նկատմամբ փոխադարձ պարտականությունների կրումը: «...իրաւունքի գաղափարը հարկաւորապէս կը ծնի պարտուց գաղափարը... Կը յարգեմ ուրիշին իրաւունքները, այդ իմ պարտքս է, և կը պահանջեմ որ իմիններս ալ յարգեն, այդ, ա՛յ, իրաւունքս է:... չկայ պարտք առանց իրաւանց, ոչ ալ իրաւունք առանց պարտուց»²²:

Ռուսինյանը և հայ այլ լուսավորիչներ բնությունից մարդկանց ազատ լինելու գաղափարները օգտագործել են որպես Կոստանդնուպոլսի ռեակցիոն, հետադիմական մտածողների, ավատատիրական կարգերը պաշտպանողների դեմ պայքարելու միջոց: Հասարակական նման խավի ամենամուլի գաղափարախոսներից է հանդիսացել **Հովհաննես Չամուռճյանը**²³, որը հայ իրականության այն հետադիմական մտածողներից էր, որ հասարակական ցանկացած երևույթ տեսնում էր միայն կրոնական դոգմաների միջոցով: Չամուռճյանը կրկնել է բնական իրավունքի միջնադարի գաղափարն այն մասին, որ բնական իրավունքն աստվածային օրենքների տարատեսակներից է, տրված է Աստծու կողմից: Նա աստվածաբանական տեսանկյունից ցույց է տվել, որ մարդկանց մեջ ի

www.lawinstitute.am

սկզբանե եղել է մեկ ընդհանրության մեջ միավորվելու և ապրելու ձգտում: Այդ ընդհանրությունը եղել է պետությունը, որի ստեղծման գործընթացը նման է Աստծո կողմից աշխարհաստեղծմանը: Ըստ Հ. Չամուռճյանի՝ «Ամեն իշխանութիւն տրված է Աստծոյ», որի հետևանքով էլ ֆեոդալները ստացել են բացարձակ իրավունք պետությունը կառավարելու գործում: Իշխանությունը Աստծո կողմից ստեղծված կառավարման և ենթակայության կարգ է, որի ժամանակ մարդկային աստիճանականության բարձունքում գտնվող անձի կամքը թելադրվում է բնակչության ստորին շերտերին: Ըստ ֆեոդալակեղեցական, բնաիրավական մտքի՝ մարդկային հասարակության մեջ գործող բոլոր օրենքները կապված են միմյանց հետ, իսկ օրենքների բուրգը պսակում է հավերժական օրենքը, որը նույնանում է Աստծո հետ: Բնական իրավունքը, իր հերթին, Աստծո կողմից ստեղծված հավերժական օրենք է, որի հիման վրա էլ առաջացել են մարդկային (դրական) օրենքներ, որոնք հարկադրանքով և վախով ստիպում են մարդկանց խուսափել չարիքից և հասնել առաքինության: Ըստ հայ հոգևորականի՝ մարդկային օրենքները, ի հակադրություն բնական իրավունքի, ժամանակի պահանջներին համապատասխան՝ ենթարկվում են փոփոխությունների:

Հ. Չամուռճյանի գաղափարները բնական իրավունքի մասին կապված են եվրոպական մտածողների, մասնավորապես՝ կրոնական գործիչների հայացքների հետ:

Հ. Չամուռճյանը միանգամայն դեմ էր այն տեսակետին, որ մարդիկ ծնվում են ազատ և հավասար, նա պնդում էր, որ բնությամբ մարդիկ հավասար չեն և չեն կարող լինել այն պատճառով, որ մարդկանց մեջ կան մեծ ու փոքր, ընդունակ և անընդունակ, աշխատասեր և ոչ աշխատասեր, տեր և ծառա, հարուստ և աղքատ: Չամուռճյանը մարդկանց հավասարության գաղափարը մեկնաբանել է որպես թագավորի դեմ հպատակներին գրգռելու փորձ: Այդ պատճառով էլ նա ծառաներից և հպատակներից պահանջել է կատարել Աստվածաշնչի պահանջները և ոչ թե Ռուսոյի կամ նրա նմանների խորհուրդները:

Նման հեղինակների և խորհրդատուների հասցեին հրապարակախոսներից մեկը գրել է. «Խնում են այս բաժակը՝ առանց մվիրելու ձեզ, ով գիր և դպրություն, որովհետեւ դուք չտվեցիք մեզ այն, ինչ որ պահանջում են կյանքը և իրական աշխարհը: Դուք լցրիք մեր գլուխը ունայն վերացական ցնորքներով... Դուք մեզանից դիակներ պատրաստեցիք, որոնց մեջ մեռած է ամեն մարդկային բարձր և վսեմ զգացմունքը: Դուք ավելի պնդացրիք մեր ստրկության շղթաները եւ վարժեցրիք տանել բռնության ծանր ու անպատիվ լուծը...»²⁴:

Բնաիրավական սկզբունքներին դավանող մտածողներից է եղել նաև **Մատթևոս Մամուրյանը**²⁵: Նա, իր խմբագրած «Արևելյան մամուլ» հանդեսի էջերից անդրադառնալով բնական իրավունքի հարցին, վկայակոչել է, որ սկզբնապես մարդիկ բնական օրենքով ազատ են եղել, սակայն հետո ստրկացել են:

Ըստ Մամուրյանի՝ օրենքները լինում են երեք տեսակ՝ բնական օրենք, երկնային օրենք և հասարակաց կամ ընկերական օրենք²⁶: Բացատրելով նշված օրենքների իրավաբանական իմաստը՝ հեղինակը գրել է. «Բնական օրենքը մեզի ի բնու տրված է և Աստվածային տասն պատուիրանց մեջ ամփոփված. մի ընեւ ուրիշին, ինչ չես կամիր, որ քեզ ընեն»: «Երկրային օրենք» ասելով հասկացել է եկեղեցական կամ հոգևորական օրենքները: «Կրոնական օրենքն որ Աստծոյ հեղինակության մեջ դրոշմն ունի, բնականին լրումն...: Ինքը Յիսուս Քրիստոս ըսաւ.: Չիրար սիրեցեք, այս են ամեն օրէնք և մարգարեք»: Այնուհետև, «ընկերական կամ հասարակաց օրենք» ասելով, հասկացել է պետության կողմից ընդունված օրենքները, որոնք հանդես են գալիս երկու ձևով. առաջինը վերաբերում է երկրի ներքին հասարակական հարաբերություններին, իսկ երկրորդը՝ միջպետական հարաբերություններին:

Մ. Մամուրյանը պետության կողմից սահմանվող օրենքները բաժանել է պետությունների և քաղաքացիների միջև առաջացող հարաբերությունները կարգավորող օրենքների:

Խաչատուր Աբովյանը²⁷, հանդիսանալով հայոց նոր լեզվի և գրականության, հայկական լուսավորչական շարժման դեմոկրատական ուղղության ռահվիրան, ամբողջ կյանքը և գործունեությունը նվիրել է իշխող հետամնաց ֆեոդալական հարաբերությունները վերացնելուն և կրթաավատական գաղափարախոսության դեմ պայքարելու գործին: Աբովյանը իր հերոսների միջոցով որոնել է բնականը՝ ընդունելով այն գաղափարը, որ մարդուն բնությունը ստեղծել է ազատ և հավասար՝ անկախ ռասայից, դավանանքից, սեռից: Հայ լուսավորիչը, հենվելով ռուսոյական գաղափարախոսության վրա, վկայակոչել է, որ մարդը իր բնական վիճակով ազատ է և հավասար, իսկ պետության մեջ դարձել է ստրուկ: Ըստ Աբովյանի՝ իր բնությով ազատ մարդը ստրկացել է աղքատության հետևանքով, քանի որ հարուստները մարդկանց ձեռքից խլել են հողն ու ջուրը և ավելի հարստացել հողագուրկների հաշվին: Այդ պատճառով էլ նա, որպես ոչ բնական, մերժում է ամեն մի ստրկություն ու բռնակալություն և մարդկանց փոխհարաբերություններում որոնում է բնականը: Աբովյանը մարդկանց բնական իրավունքները վերականգնելու համար առաջ է քաշում կյանքի ազատության, հավա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սարության, երջանկության, ինքնակառավարման և այլ իրավունքներից զրկվածների ապստամբության պահանջը: Աբովյանը դատապարտում է բնական իրավունքի վերականգման համար չպայքարողներին՝ ասելով. «Վայ էն ազգին, որ, բնական օրենքը թողած, անբնականին կհետևի»²⁸:

Բնական իրավունքի տեսությանն է անդրադարձել նաև **Միքայել Նալբանդյանը**²⁹: Նա իր՝ «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հոդվածում խոսելով բնական իրավունքի մասին՝ արտահայտել է այն կարծիքը, որ համաձայն բնական օրենքի՝ մարդը իր ներքին աշխարհով ազատ է և հավասար, հետևաբար այդ օրենքով էլ պետք է կարգավորվեն մարդու և արտաքին աշխարհի բոլոր հարաբերությունները: Սակայն, բռնակալական բարքերը խլել են մարդու ազատությունը: «Այս բոլոր նկատողությունքը հավանեցնում են մեզ, թե մարդը ստեղծված է ազատ լինելու համար. նորա ազատությունը հետևանք է նորա ֆիզիկական կատարյալ կազմությանը և աննյութ և իմացական կարողությանը: Ազատությունը կամ ազատության վերամբարձ ցանկությունը, որով միայն մարդը՝ որպես բնական էակ, գիտակցաբար ճանաչած է լինում յուր արժանավորությունը այլ արարածների մեջ, վառվում է, բորբոքվում է, մանավանդ եթե մի սեղանապիղծ ձեռք կամ իրողություն փորձ փորձեր կապել այս ինքնագո, հոգեկան ձգտողության և անձնզգայության բնական իրավունքը: Եվ ճշմարիտ, ով մեզանից բողոքելու չէր, եթե մի բարբարոս և բռնակալ ձեռք կապեր մեզ թե՛ նյութապես և թե՛ բարոյապես կամ արգելանքի տակ դներ մեր ազատությունը, մեր կամքը, որ հետևանք էին մեր հոգեկան և ֆիզիկական կատարելիությանը»³⁰: Շարունակելով իր միտքը՝ հայ խոշոր մտածողը վկայել է, որ դարեր շարունակ մարդկանց ազատ կարողությունները կալանքի տակ դնելու հետևանքով են առաջացել ու զարգացել հակամարդկային բոլոր երևույթները: «Վկա է պատմությունը, որ ապստամբությունք, խռովությունք, սպանությունք, հրկիզք, հափշտակությունք և այլ սոսկալի մոլությունք ծնեցան բռնակալութենից: Բռնակալական հոգին, որ պաշտպան է ստրկության, բռնակալությունը, որ չկամի խոստովանել մարդկային հավասարությունը, անիրավաբար մոտենալով ուրիշի ստացածին և իրավունքին, առաջին անգամ մերկացուց երկաթը անգորի և անպաշտպանի պարանոցի վերա»³¹: Հայ հեղափոխական գործչի կարծիքով ծննդյան պահից ստացած բնական իրավունքը մարդիկ օտարել են ոչ թե իրենց կամքով, այլ բռնությամբ, իրենց նմանների ձեռքերով, քանի որ վերջիններս հզոր էին տնտեսապես և քաղաքականապես: «...ազատություն ասացյալը ..., սեփականություն լինելով ամբողջ մարդկության, սորա յուրաքանչյուր անդամը հավասարաչափ ուներ նորան, և այլապես մե-

ծանալու, ծովանալու չէր մի անդամի ազատություն, եթե չը խլեր նա մի այլ յուր պես մարդկության անդամներից:»³²:

Ինչպես բնական իրավունքի տեսության առաջադեմ մտածողները, այնպես էլ Խ.Աբովյանը, Մ. Նալբանդյանը արհեստական կամ դրական իրավունքի աղբյուրը համարել են բնական իրավունքը և դատապարտել են պետության այն օրենսդիրներին, որոնք, ընդունելով մարդկային օրենքները, ոչնչացրել են բնական իրավունքի պահանջները, այսինքն՝ խախտել են բնական իրավունքի առաջնությունը դրական իրավունքի նկատմամբ: Այդ պատճառով էլ Նալբանդյանը նշել է, որ ժամանակի ընթացքում բռնապետների կամքով դրական օրենքները շեղվել են բնական իրավունքից, որի հետևանքով էլ մարդկային հասարակության մեջ սերմանել են կամայականություններ, անհավասարություն, արհամարհանք մարդու նկատմամբ: «Բնական օրենքը՝ վսեմական օրենք, գերագույն բոլոր մարդկային օրենքներից, վաղուց արդեն հասկացուցել է աշխարհին, թե մարդիկ հավասար իրավունքներով դուրս եկան արարչագործ Աստծո ձեռքից: Մարդկային օրենքը դրվեցավ, թեպետ և շատ անգամ և շատ դիպվածում շեղվելով բնական օրենքից՝ ի վերա ... ամենայնի, ընտանեկան կամ ընկերական կյանքի պայմանները սուրբ պահելու համար. այդ օրից սկսած՝ դատապարտության տակ ընկավ նա, որ հանդգնեցավ մոտենալ ուրիշի իրավունքին, կամ դրժել ընկերական կամ ընտանեկան նվիրական պայմաններին: Իրավադատության մեջ է ազգի կյանքը... Եթե մի ազգի մեջ չկա օրենք, չկա իրավադատություն, համարձակ քարոզում ենք՝ այդ ազգի կյանքը բարբարոսական է: »³³:

Ժամանակին բնական իրավունքի որոշ տեսաբաններ մարդու անօտարելի իրավունքների վերականգնումը տեսնում էին բուրժուազիայի հաղթանակի, կապիտալիստական պետականության հաստատման մեջ, բայց Մ. Նալբանդյանը մերժեց այդ գաղափարը, քանի որ բուրժուազիան ազատության կարող էր բերել միայն իր դասակարգի տնտեսական շահերի համար: «Ազատությունը, հավասարությունը և յեղբայրությունը յուրյանց հիշատակը թողեցին մի քանի վոսկիների վերա. պատերի վերայի կարմիր գրերը դատապարտվեցան մնալ մի սպիտակ ներկի տակ»³⁴, - գրել է Մ. Նալբանդյանը:

Հայ մշակույթում կրոնը գիտության, հավատը բանականության հետ հաշտեցնող հրապարախոս, լուսավորիչ, մանկավարժ, իդեալիստ, փիլիսոփա **Ստեփանոս Նազարյանը** բնական իրավունքի տեսաբանների օրինակով վկայել է, որ այդ իրավունքը չէր առաջանա, եթե Աստված չստեղծեր իր օրենքները: « Բոլոր բաները բխում են Աստծուց, և այդպես Աստված գտնվում է ամենայն բաների

www.lawinstitute.am

մեջ, և Աստված է ճշմարտությունը ամենայն բաների...»³⁶: Այդ պատճառով էլ, հետևելով Ռուսոյին, Նազարյանը սնտոիապաշտությունից ազատվելու միակ ճանապարհը համարել է ոչ թե եկեղեցին, այլ Աստծո գոյությունը վկայող բնությունը: Բնության իրերը, օրենքն ու մարդկանց բանականությունը միջոցներ են Աստծո էությունը ճանաչելու և նրա դերը հասկանալու համար: Ըստ Նազարյանի՝ մարդուն տրված կամքն ու բանականությունը, իրավունքն ու ազատությունները հնարավորություն են տալիս ճանաչելու Աստծուն և նրա էությունը, ճանաչելու նաև բնությունը, «տեղ ու իշխան լինել նրա վրա և չսպասել Աստծո ողորմածությանը»:

Այստեղից էլ, Նազարյանի կարծիքով, Աստված մարդուն հնարավորություն է տվել ինքնուրույն տնօրինելու իր ճակատագիրը և իրավունքները: Աստված ստեղծել է բնական օրենքներ, որպեսզի մարդիկ դրանց օգնությամբ կատարեն իրենց գործերը առանց Աստծո միջնորդության:

Հենվելով Ռուսոյի «Հասարակական դաշինք»-ի գաղափարների վրա՝ հայ մտածողը նշել է, որ մարդիկ անցել են երկու՝ բնական և հասարակական, ժամանակաշրջաններ: Եթե առաջինում նրանք ցրված և անմիաբան վիճակում էին, ապա երկրորդում փոխադարձ պայմանավորվածության հետևանքով՝ ստեղծել են «ընկերական կյանք», շնորհիվ որի ձեռք են բերել խաղաղ ապրելու լայն հնարավորություններ: Այստեղից էլ մարդու իրական պատմությունը սկսվում է այն ժամանակվանից, երբ նա դառնում է հասարակության անդամ: Այսինքն՝ պետության առաջացման հիման վրա մարդը բնական վիճակից հասնում է քաղաքացիական վիճակի:

Ըստ Նազարյանի՝ մարդու բնական իրավունքների և ազատությունների իրականացումը հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ մարդիկ հասարակական դաշինքի միջոցով ստեղծում են պետություն, որն ընդունում է բնական իրավունքի պահանջներից բխող օրենքներ: Ս. Նազարյանն այս գործընթացը տեսնում է այնպիսի պետության օրոք, որը հենվում է արդարության, մարդուն Աստծո կողմից տրված բնական իրավունքների վրա:

Բնական իրավունքի մասին իր կարծիքն է հայտնել նաև գրող, մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Թադիադյանը³⁷ իր մի շարք ստեղծագործություններում, մասնավորապես՝ «Ճանապարհորդությունն ի հայս» աշխատությունում, որտեղ նա հանդես է եկել ֆեոդալական ավատատիրական բռնակալությունների դեմ՝ որպես հակաբնական իրավակարգի: Մ. Թադիադյանը վկայել է, որ բնական իրավունքով մարդիկ ի ծնե ազատ են ու հավասար, հետևաբար նրանք պետք է հավասար լինեն կյանքի ընթացքում ոչ թե մարդկանց պատկերացումներով, այլ իրական կյանքում: Քանի որ

մարդկանց բնական իրավունքները ոչնչացվել են բռնապետությունների ձևավորման հետևանքով, այդ պատճառով էլ բնական իրավունքին վերադառնալու համար անհրաժեշտ է ոչնչացնել բռնապետությունները, այսինքն՝ մարդկանց բանտից ազատելու համար պահանջվում է խորտակել բանտերը: «Եթե ազատ օրենք և ազատ կյանք չիցե նոցա, այնպիսի ոք ուրեմն համարեն ծնեալ ի բանտ և մեռնել ի բանտի»³⁸, - գրել է Թադիադյանը: Նման գաղափարն օգտակար էր բուրժուազիայի և ոչ թե աշխատավոր մարդկանց համար. դրա մասին սկզբնական շրջանում պարզ պատկերացում չուներ հայ մտածողը: Ավելին, նրա կարծիքով բուրժուական պետական կարգը՝ իր հանրապետական կառավարման ձևով կազատի աշխատավոր մարդկանց ճորտությունից ապօրինություններից, իրավազրկությունից: Նա փորձել է հավատալ, որ բուրժուազիան, խորտակելով ֆեոդալական կապանքները, կստեղծի այնպիսի իրավակարգ, որտեղ մարդիկ կապրեն իրենց բնական իրավունքներով: Այդ պատճառով էլ Հայաստանից շատ հեռու՝ Մադրասում, գրած հոդվածներում նա խորհուրդ էր տալիս իր ազգին՝ հայերին, Հայաստանում ստեղծել բոլոր պայմանները բուրժուազիայի զարգացման համար: Սակայն, շատ շուտով Թադիադյանը հասկացավ, որ ստեղծված բուրժուական պետություններում չեն վերացվել մարդկանց թշվառությունները, աղքատությունը, հետևաբար՝ անհավասարությունը: Այսինքն՝ ավատատիրության խորտակումով ոչինչ չի փոխվել եվրոպական բուրժուական երկրներում, մարդը բոլորովին էլ չի դարձել իր բնական իրավունքի տերը:

19-րդ դարի արևմտահայ նշանավոր մտածողներից Ռաթևոս Պերպերյանը³⁹ իր տնտեսագիտական ուղղվածությամբ աշխատություններում նույնպես չի շրջանցել քաղաքական և հասարակական կյանքին վերաբերող հարցերը, որոնցից են բնական իրավունքի տեսության գաղափարները: Նա, իր «Համառօտ քաղաքական տնտեսութիւն» մենագրության մեջ անդրադառնալով «բնական իրավունքի» հարցերին, հայտնել է հետևյալ կարծիքը. «Կառավարութեանց իրաւասութիւնն կը բոխի անհատից իրաւունքներէն: Որովհետեւ մէկ մի անհատ իրաւունքներ ունի գոր այլ անհատից պարտքն է յարգել, ինչպէս և իր պարտքն է յարգել այլոց իրաւունքն: Կառավարութեան պաշտօնն է հսկել, որ իւրաքանչիւրն անարգել վայելէ իր իրաւունքներն... հսկել որ ... վայելէ իր ազատութիւնն, ինչ որ կ'ենթադրէ որ ոչ ոք բռնաբարէ այլոց ազատութիւնն»⁴⁰: Հայ մտածողը, ինչպես նաև քննարկվող ժամանակաշրջանի եվրոպական կողմնորոշում ունեցող մի շարք մտածողներ, բնական իրավունքի մասին հայացքները շարադրել է Ռուսոյի «Հասարակական դաշինք»-ի գաղափարների հի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ման վրա: Բանասերը պետությունը դիտել է այն կազմակերպությունը, որը պարտավոր է պահպանել մարդկանց բնական և անհատական իրավունքները: Այստանությունը միապետի նկատմամբ արդարացի է ըստ Պերպերյանի, քանի որ դրանով հասարակ մարդիկ պատասխանում են միապետի բռնություններին: Նա խնդիր է դնում նորացնել այն կառավարությունը, որն օրինականացնում է դասային արտոնությունները ի վնաս մարդկանց իրավունքների, ընդ որում, նոր կառավարության դերը տեսնում է նրանում, որ նա չպետք է ճնշի և բռնանա մարդկանց բնական իրավունքների վրա: «Հին քաղաքակրթությանց յատկանիշն էր չբացնել անհատն, ցեղին՝ ամբողջին գերին ընել զայն. նոր քաղաքակրթութիւնք կը չափուին այն ազատութեան չափով, որ կը տրուի անհատին:»⁴¹:

Իրավական մտքի լիբերալ ուղղության կողմնակից **Գրիգոր Արծրունին**⁴² նույնպես իր կարծիքն է շարադրել բնական իրավունքի վերաբերյալ:

Իր խմբագրած հանրահայտ «Մշակ» թերթի էջերից նա հաղորդել է, որ մարդը իր ծննդյան պահից ստացել է անօտարելի իրավունքներ, որոնք չեն կարող խլվել նույնիսկ բռնակալների կողմից: Նա մարդկանց իրավունքները բաժանել է բնականի և իրականի կամ քաղաքացիականի: Ըստ Արծրունու կյանքի, ազատության, հավասարության, ինքնակառավարման, երջանկության ձգտելու իրավունքները բնական, հավերժ գոյություն ունեցող օրենքներ են, որոնք անկախ նրանից, թե պետությունը իր կողմից ընդունված օրենքներում կամրագրի, թե՛ ոչ, գոյություն ունեն և պետք է գործեն: Ըստ Արծրունու՝ մարդիկ նահապետական դրության մեջ եղած ժամանակ չեն կարողացել հասնել իրենց անհատականության ճիշտ ինքնաճանաչողությանը: Ֆեոդալիզմն իր հերթին արգելել է անհատականության ճանաչումը, որովհետև ճորտը անազատ էր և գամված տիրոջ հողին: Հայ նշանավոր գործչի

կարծիքով, մարդկանց հավասարությունը հանդիսանում է որպես քրիստոնեության հիմնական սկզբունք: «Ազատություն, հավասարություն, եղբայրություն. քրիստոնեության եռյակ սկզբունքներն են ու հավերժական են ամեն մարդի, ամեն կազմվածքի, ամեն կլիմայի, ամեն ազգի, ամեն ցեղի, ամեն ժամանակի համար ճշմարտություններ են և կմնան...»⁴³, - գրել է Արծրունին:

Այսպիսով, ամփոփելով բնական իրավունքի մասին 19-րդ դարի հայ մտածողների գաղափարները, պատկերացումները, եզրակացնում ենք, որ վերջիններս, չժխտելով Աստծո գոյությունը, այնուամենայնիվ, անփոփոխ աստվածային կեցության փոխարեն հայ իրականության մեջ սկսեցին տարածել անփոփոխ բնության գաղափարը:

Հայ լուսավորիչները, հռչակելով մարդու՝ բնությունից ազատ և հավասար լինելու ազատական սկզբունքները, մեծ հետք թողեցին կղերականության, ավատատիրական կարգերի, ազգային-ազատագրական պայքարի, ազգային ճնշման ու հասարակական կյանքի այլևայլ անարդարությունների դեմ պայքարում:

Մարդու աստվածային, բնական հատկությունները հանդիսանում են բնական իրավունքի հիմք, բնական իրավունքը՝ օրենսդրության (դրական իրավունքի) հենարան, օրենքը՝ պետության հիմնաքար. սա է, ըստ 19-րդ դարի հայ մտածողների, անկախ պետության այն ձևաչափը, որին լուսավորման, միավորման, պայքարի միջոցով պետք է ձգտի հայ ժողովուրդը:

¹ Տե՛ս Ռուսինյան Ն. Դասագիրք փիլիսոփայութեան. հետեւօրոյթեամբ լաւագոյն հեղինակած ընտրողական դպրոցի, Կ. Պոլիս, 1879, էջ 166:

² Տե՛ս Կանտ Ի. Основы метафизики нравственности. Критика практического разума. Метафизика нравов.1995. С.286.

³ Տե՛ս Պապայան Ռ.Ա. Արդի իրավունքի քրիստոնեական սկզբունքները.2002թ, էջ 272-273:

⁴ Մտարոպ Աղաչաղյան (1769-1845թթ.). փիլիսոփա, բնագետ: Ծնվել է Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է Վենետիկի Սուրբ Ղազար կղզու վանքում: 1791թ. դարձել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: 1795թ. շուրջ մեկ տասնամյակ եղել է Տյուզյան ամիրայական ընտանիքի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Օսմանյան կայսրության ֆինանսների նախարարի որդու ուսուցիչ: Այդ տարիներին Պոլսում հիմնել է քիմիայի և հանքաբանության թանգարան-լաբորատորիաներ: 1810թ. Աղաչաղյանը ընտրվել է Ֆրանսիայի հանքաբանության կայսերական խորհրդի անդամ: Տիտղոսաբեր վարդապետը գիտական մեծ ժառանգություն է թողել բնագիտության բազմադարյան պատմության էջերում:

⁵ Նույն տեղում, էջ 11:

⁶ Նույն տեղում, էջ 12:

⁷ Նույն տեղում, էջ 5:

⁸ Նույն տեղում, էջ 6-7:

⁹ Նույն տեղում, էջ 125:

¹⁰ Նույն տեղում, էջ 22:

¹¹ Գրիգոր Պատուելի Փեշտիմալճյանը (1773-1873թթ.) բառարանագիր, փիլիսոփա, մանկավարժ, հայոց լեզվի քերականագետ: Ծնվել է Կ. Պոլսում: Նրա մանկության և պատանեկության տարիների մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Տասնյոթ տարեկան հասակից, մինչև իր կյանքի վերջը (1837թ.) նա զբաղվել է ուսուցչությամբ: Փեշտիմալճյանը հռչակվել է որպես ականավոր մանկավարժ, հայոց լեզու և կրոն է դասավանդել Միջագյուղի դպրոցում, այնուհետև Մայր եկեղեցուն կից Մայր դպրոցում, որտեղ վարել է ճարտասանության, տրամաբանության, հայոց լեզվի քերականության և կրոնագիտության դասընթացներ:

¹² Տե՛ս Գ.ր. Փեշտիմալճյան, Տրամաբանութիւն կամ արուեստ բանական, Երուսաղեմ, 1854, էջ 140-141:

¹³ Նույն տեղում, էջ 141:

¹⁴ Սվաճյան Հարություն Գրիգորի (1830-1874թթ.): Ծնվել է Կ. Պոլսի Խասագյուղ թաղամասում: Ծննդավայրում նախնական կրթություն ստանալուց հետո 1845 թ. ուսանել է առաջադեմ մտավորական Խաչատուր Պարտիզմանյանի դպրոցում: 1846-1848 թթ. ուսանել է Պողոս Օտյանի տուն-դպրոցում: 1848-1852 թթ. մեկնել է Փարիզ և ուսանել Սենթ Պարաի բարձրագույն դպրոցում: 1852 թ. վերադարձել է Կոնստանդնուպոլիս, Խ. Պարտիզմանյանի և Գ. Օտյանի հետ մասնակցել է Ն. Ռուսինյանի լուսավորական խմբակցությանը, պայքարել կղերա-ամիրայական հոսանքի դեմ: 1854 թ. նշանակվել է Պեշիկթաշի դպրոցի ուսուցիչ: 1856 թ. Կոնստանդնուպոլսում հիմնադրել է խմբագրել է «Մեղու» կիսամյա հանդեսը: Մասնակցել է Ազգային կանոնադրության մշակմանը: 1862 թ. սկզբին նրա մասնակցությամբ ստեղծվել է «Հայք» մատենական կազմակերպությունը, որը զբաղվել է Կ. Պոլսի հայկական գաղութի լուսավորության և տնտեսական զարգացման, ինչպես նաև ազգային ազատագրական հարցերով: Համաձայնական հեղափոխական շարժման, թուրքական բռնապետության դեմ ազատագրական ելույթների, ինչպես նաև Մ. Նալբանդյանի անմիջական ազդեցությամբ 1860-ական թվականներին դարձել է հեղափոխական դեմոկրատիզմի հետևորդ, առաջադրել է ազգային և սոցիալական ճնշումը զենքով վերացնելու գաղափարը, ընդ որում նա կոչ էր անում օտար նվաճողների լուծը քթափռելուց հետո զենքը ուղղել սեփական հարստահարիչների դեմ:

¹⁵ Տե՛ս Արևելյան մամուլ, 1881, հ. IV, էջ 141:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 140:

¹⁷ Անտոն Գարագաշյան (Մատթիա) (1818 -1903թթ.) հայ քննական պատմագրության հիմնադիր, փիլիսոփա, տրամաբան, լեզվաբան: Ծնվել է Կ. Պոլսում: Մովորել է Վիեննայի Մխիթարյանների մոտ, ապա Վիեննայի համալսարանում: 1836 թ. Մխիթարյան միաբանության անդամ, 1840թ.՝ քահանա: 1856թ. պաշտոնապես հրաժարվել է կրոնին ծառայելուց և հայ իրականության մեջ առաջինն է իրեն համարել՝ մատերիալիստ ու աթեիստ: Գարագաշյանը հայտնի է նաև որպես գիտության տարբեր բնագավառների՝ լեզվի, փիլիսոփայության, տրամաբանության, աստղաբաշխության, աշխարհագրության վերաբերող մի շարք դասագրքերի հեղինակ:

¹⁸ Նույն տեղում, էջ 329:

¹⁹ Ռուսինյան Նահապետ Պայազատի (1819 – 1876թթ.) հայ մտածող, հասարակական գործիչ: Ծնվել է Կեսարիայի գավառի Էվքերի գյուղում: Հաճախել է Կեսարիայի նախակրթարանը, իսկ 1829 թվականից՝ Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցու վարժարանը: 1844 թ. ընդունվել է Սորբոնի համալսարանի բժշկագիտության ֆակուլտետը, 1851 թ. առաջել է բժշկագիտության դոկտորի կոչում: Ռուսինյանը ամենակարևորը համարել է աշխարհաբարի մշակումը: 1863 թ. պարբերաբար ընտրվել է Ազգային ժողովի երեսփոխան և մի շարք տարիներ ղեկավարել է նրա նիստերը: Դասավանդել է կայսերական բժշկական ուսումնարանում: Կյանքի վերջին տարիներին զբաղվել է փիլիսոփայությամբ:

²⁰ Ռուսինյան Ն. Դասագիրք փիլիսոփայութեան. հետետեղութեամբ լուսագոյն հեղինակած ընտրողական դպրոցի, Կ. Պոլիս, 1879, էջ 164-165:

²¹ Նույն տեղում, էջ 165:

²² Նույն տեղում, էջ 166:

²³ Չամուռճյան Հովհաննես Տերոյենց Մերովբեի, բուրսացի Տեր-Կարապետյան (1801-1888թթ.) հրապարակախոս, կրոնական գործիչ, բանասեր, թարգմանիչ: Ծնվել է Կ. Պոլսի Պրուսա թաղաքում: Մինչև 1815 թվականը Տրոյենցը սովորել է ծննդավայրի դպրոցում: 1830 թվականին թուրքական Մեհմետ սպարապետի կողմից հրավիրվել է պալատ թարգմանչի պաշտոնով: 1836թվականից տեղափոխվում է հայաշատ Սկյուտար թաղամաս, ստեղծում է մատենադարան և նվիրվում իր սիրած աշխատանքին, այն է՝ գրել ու կարդալ անընդհատ: Լինելով կղերաամիրայական պահպանողական հոսանքի պարագլուխ՝ նա հանդես է եկել որպես ազատագրական գաղափարների մոլեռանդ թշնամի: Ստեղծել է եկեղեցիական 30 հատորյա պատմություն, թարգմանել է վեպեր, Ժ.Ժ.Ռուսոյի «Հասարակական դաշինք» աշխատությունը, գրել է ստեղծագործություններ՝ կրոնա- բարոյական քննադատությամբ, հայերենի քերականության դասագիրք:

²⁴ Տե՛ս Չաքարյան Ա., Հովհաննիսյան Գ. Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920թթ.), Երևան, 1982, էջ 331-332:

²⁵ Մամուրյան Մատթեոս Հովհաննեսի (1830-1901 թթ.) արևմտահայ դեմոկրատական գործիչ, հրապարակախոս, գրող, թարգմանիչ, բանասեր, պատմագետ, մանկավարժ: Ծնվել է Չմյուռնիա թաղաքում: 1845 թ. ավարտել է Չմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը, 1850թ.՝ Փարիզի Մուրադյան վարժարանը: 1851 թ. Մ. Աղաբեկյանի հետ Չմյուռնիայում հիմնադրել է «Աղաբեկյան» ուսումնարանը: 1853 թ. ուսուցչություն է արել Կոնստանդնուպոլսում, գորակոչվել է բանակ և Գրիմի պատերազմի ժամանակ աշխատել իբրև թարգմանիչ: 1856-1857 թթ. եղել է Քեմքիջի համալսարանի ազատ ունկնդիր: 1860-1865 թթ. եղել է Կոնստանդնուպոլսի պատրիարքարանի ղեկավար: 1865-1899 թթ. եղել է Մեսրոպյան վարժարանի տեսուչը, դասավանդել անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և համաշխարհային պատմություն: 1871-1901 թթ. Չմյուռնիայում հրատարակել է «Արևելյան մամուլ»

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գրական-քաղաքական հանդեսը:

²⁶ Տե՛ս Մամուրյան Մ. Հին պատմություն, հ.Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 22:

²⁷ Խաչատուր Ավետիքի Արովյան (1809-1848թթ.). գրող, մանկավարժ, արևելահայ աշխարհաբար գրականության հիմնադիր: Ծնվել է Երևանի մոտ գտնվող Քանաքեռ գյուղում: 1819-1822թթ. հաճախել է Էջմիածնի վանական դպրոցը: 1823-1826 թթ. ուսանել է Թիֆլիսում գտնվող Ներսիսյան դպրոցում: 1826 թ. վերադարձել է հայրենիք: 1827-1828թթ. դասավանդել է Սանահինի վանքում: Էջմիածնում կարգվել է որպես սարկավագ և թարգման: 1830-1835 թթ. պետական թոշակով ուսանել է Գորպատի համալսարանում: 1836թ. վերադարձել է հայրենիք և չհամակերպվելով ներագալստիան խնդիրներում Էջմիածնի դիրքորոշման հետ՝ հրաժարվել է հոգևոր կոչումից: 1837-1843թթ. աշխատել է որպես Թիֆլիսի գավառական դպրոցի տեսուչ, հիմնադրել է մասնավոր դպրոց:

²⁸ Տե՛ս Արովյան Խ., ԵԼԺ, հ. III, Երևան, 1948, էջ 171:

²⁹ Սիբայել Բազարի Նալբանդյան (1829-1866թթ.). հայ գրող, հրապարակախոս, փիլիսոփա, հեղափոխական դեմոկրատ, հայ ռեալիստական գեղագիտության և քննադատության հիմնադիր: Ծնվել է Նոր Նախիջևանում, որտեղ էլ ստացել է սկզբնական կրթությունը: 1853 թ. Պետերբուրգի համալսարանում հաջողությամբ քննություն հանձնելով՝ ստացել է հայոց լեզվի ուսուցչի կոչում՝ դասավանդելով Լազարյան ճեմարանում: 1860 թ. ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ արևելյան բանասիրության գծով: 1853-1854 թթ. դասավանդել է հայոց լեզու: 1862 թ. ձերբակալվել է Նոր Նախիջևանում, ապա բանտարկվել Պետրոպոլիսյան բերդում: Սենատի՝ 1864 թ. դատավճռով ոստիկանության խիստ հսկողության տակ աքսորվել է Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը, որտեղ էլ մահացել է:

³⁰ Տե՛ս Նալբանդյան Մ., ԵԼԺ, հ. II, Երևան, 1947, էջ 213:

³¹ Նույն տեղում, էջ 214:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 303:

³⁴ Տե՛ս Նալբանդյան Մ., ԵԼԺ, հ. III, Երևան, 1941, էջ 54:

³⁵ Ստեփանոս Եսայու Նազարյան (1812- 1879թթ.). հայ հրապարակախոս, լուսավորիչ, մանկավարժ, փիլիսոփա, արևելագետ, գրականագետ: Ծնվել է Թիֆլիսում: 1824-1829 թթ. սովորել է Ներսիսյան դպրոցում: 1829-1832 թթ. նույն դպրոցում դասավանդել է պատմություն և աշխարհագրություն: 1833-1835 թթ. Խ. Արովյանի միջնորդությամբ ընդունվել է Գորպատի համալսարանի հսկողության տակ գտնվող գիմնազիան: 1835 թվականին ընդունվել է նույն համալսարան՝ սովորելով տնտեսագիտական, ապա բժշկական ֆակուլտետներում, իսկ 1836 թվականից՝ փիլիսոփայության ֆակուլտետի պատմության բաժնում: 1841 թ-ին ստացել է փիլիսոփայության գիտությունների թեկնածուի, իսկ 1849 թ.՝ արևելյան գրականության դոկտորի գիտական աստիճան: 1842-1849 թթ. հանդիսացել է Կազանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, իսկ 1849 թ. Լազարյան ճեմարանում ստանձնել է պարսից և արաբական լեզուների ու գրականության ամբիոնը: 1858 թ. հիմնադրել է խմբագրել է «Հյուսիսափայլ» ամսագիրը:

³⁶ Տե՛ս «Հյուսիսափայլ», 1864, հ. II, էջ 133:

³⁷ Մեսրոպ Գավթի Թաղիադյան (1803-1858թթ.). հրապարակախոս, գիտնական, գրող, մանկավարժ: Ծնվել է Երևանի Ձորագյուղի Կարբի թաղամասում: 1812թ. ընդունվել է Էջմիածնի դպրոցը, ուսումը շարունակել է Ալոռի վանքում: Ցանկանալով ծանոթանալ լուսավորված Եվրոպային, հնդկահայ մեծատունների հետ՝ 1823թ. հրաժարվել է հոգևոր կոչումից և հեռացել վանքից: 1825թ. Թաղիադյանը տեղափոխվել է Կալկաթա, որտեղ նշանակվել է Հայոց մարդասիրական ճեմարանում որպես հայոց լեզվի ուսուցիչ: 1831թ. մեկնել է Նոր-Ջուղա և հանձն է առել ջրուղայեցի երեխաների դաստիարակության գործը: 1839թ. Սիբիր աքսորելու նպատակով Թաղիադյանը ձերբակալվել է, սակայն վերջինիս հաջողվել է փախչել և հասնել Հնդկաստան: 1845 թ. Հնդկաստանում ստանձնել է «Ազգասեր» հանդեսի խմբագրությունը և նոր սիրով ու եռանդով առաջ է տարել իր ստեղծագործական և հրապարակախոսական գործունեությունը:

³⁸ Տե՛ս «Ազգասեր», 1847, հ. 91, էջ 153:

³⁹ Ռաբոս Հակոբի Պերպերյան (1848թ. -1907թթ.). հայ գրող, մանկավարժ, բանաստեղծ և թարգմանիչ: Ծնվել է Կ. Պոլսի հայաշատ թաղամասերից մեկում: Սկզբնական կրթությունը ստացել է Ներսիսյան վարժարանում: 1869թ. սովորել է Համազասպյան վարժարանում, այնուհետև զբաղվել է ուսուցչությամբ և՛ այնտեղ, և՛ Արամյան ու Փանոսյան վարժարաններում: Մանկավարժական աշխատանքի հետ միասին զբաղվել է ստեղծագործական աշխատանքով՝ թողնելով քաղաքական, տնտեսագիտական, փիլիսոփայական թեմաներով գիտական մեծ ժառանգություն:

⁴⁰ Տե՛ս Պերպերյան Ռ., Համառոտ քաղաքական տնտեսություն, Կ. Պոլիս, 1883, էջ 83:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Արծրունի Գրիգոր Երեմիայի (1845-1892 թթ.). հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ: Ծնվել է Մոսկվայում: 1863 թ. ավարտել է Թիֆլիսի ռուսական գիմնազիան և ընդունվել Մոսկվայի համալսարան: 1864 թ. տեղափոխվել է Պետերբուրգի համալսարան: 1869 թ. ավարտելով Հայդելբերգի համալսարանը՝ Գր. Արծրունին ստացել է քաղաքատնտեսության և փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1869-1870 թթ. հայերենի դասեր է առել Վիեննայի, այնուհետև Վենետիկի Միսիթարյանների մոտ: 1870 թ. վերադարձել է Թիֆլիս: 1872 թ. հրապարակել է «Մշակ» շաբաթաթերթը: Հրապարակախոսական գործունեությանը զուգընթաց Արծրունին զբաղվել է ստեղծագործական աշխատանքներով՝ թողնելով գրական-քննադատական մեծ ժառանգություն:

⁴³ Տե՛ս Արծրունի Գր., Երկեր, հ. I, էջ 314:

Нелли Овсепян

Главный специалист юридического департамента
министерства транспорта и связи РА
Соискатель ученой степени кандидата наук института философии,
социологии и права Национальной академии наук РА.

РЕЗЮМЕ

Взгляды армянских мыслителей 19-ого века о естественном праве

Статья посвящена комплексному исследованию естественно-правовых взглядов ведущих армянских мыслителей 19-ого века, таких как М.Агачрахян, Г. Пештималчян, Г. Свачян, А. Гарагашян, Н. Русинян, О. Чамурчян, М. Мамурян, Х. Абовян, М. Налбандян, С. Назарян, М. Тахиардян, Р.Перперян, Г. Арцруни. На основе проведенного исследования, автор установил, что армянские мыслители 19-ого века, наследуя идеи европейских мыслителей эпохи возрождения о естественном праве, общественном договоре, не отрицая существования Бога, естественные права человека связывали не с божественной волей, а с самой разумной природой человека. Призывая к освободительной борьбе, агитировались такие понятия, составляющие основу естественного права, как равенство, братство, свобода. Свободолюбивые, просветительские идеи исследуемых мыслителей стали одним из предпосылок, которые способствовали национально-освободительной борьбе армянского народа.

Ключевые слова: естественное право, свобода, равенство, братство, позитивное право, просвещение.

Nelli Hovsepyan

Chief specialist of the Legal Department of the Ministry
of Transport and Communication of RA.
Applicant for candidate degree Institute of Philosophy, Sociology and Law
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

Views of the leading Armenian thinkers of the 19th century about natural rights

The paper is devoted to comprehensive investigation of natural rights views of the leading Armenian thinkers of the 19th century, such as M. Agachrakhian, G. Peshtimalchian, G. Svachian, A. Garagashian, N. Rusinian, H. Chamurchian, M. Mamurian, Kh. Abovian, M. Nalbandian, S. Nazarian, M. Takhiardian, R. Perperian, G. Artsruni. Carrying out her investigation, the author established that the above-mentioned Armenian thinkers, following the ideas of European thinkers of Renaissance on natural rights and social contract and not denying the existence of God, would not assign the natural rights to divine will, but ascribed them to the reasonable nature of man. Appealing to the struggle for national liberation, such fundamental notions of natural rights as equality, brotherhood and freedom had been propaganded. The enlightenment ideas of liberty of the investigated thinkers were one of the prerequisites for the national liberation struggle of the Armenia people.

Keywords: natural right, freedom, equality, brotherhood, positive right, enlightenment.